ռաջնորդ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի նոյեմբերի 6-ի թ. 841 յայտարարութեան վրայ հետևեալ մակագրութիւնն է արել. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի ս. Սինոդին, համաձայն Ատրպատականի Հայոց թեմական առաջնորդի կրկնակի թախանձանաց, կարգադրել ուղարկել Մայր Աթոռի գանձարանից, Ատրպատականի առաջնորդարանի միջոցով, ամսական 30-ական ռուբլի՝ Ուրմիայի Հայոց փոխանորդ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին մի տարի ժամանակով»: 29 նոյեմբերի, թ. 1856:

Կ. Պոլսոյ Տիկնանց Դպրոցասէր Ընկերութեան յօգուտ կրթական գործի մի հարիւր ռուբլի նուէր վեհափառ Հայրապետի կողմից:

---

## ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

1 նոյեմբերի, թ. 593. Սինօդը՝ Մայր Աթոռի կալուածոց կառավարչի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կառավարչին Գանձասարի կալուածում գտնուող «Աշմանա» հողերից 400 դեսեատին վարձով տալ Շուշույ գաւ. Քարագլուխ գիւղացիներին երկու տարի ժամանակով, տարեկան 550 ռուբ. վարձով, պարտաւորեցնելով գիւղացիներին տալ Մ. Աթոռի օգտին նաև բոլոր բերքերի մասը:

1 նոյեմբ., թ. 594. Սինօդը՝ Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային վճարել թեմի Պտկի ս. Գէորգ վանքի վանահայր Գրիգոր քհնյ. Սարգսեանին վիճակային արդիւնքից ամսական 10 ռուբլի ռոճիկ:

1 նոյեմբ., թ. 597. Սինօդը՝ լսելով Ատրախանի կոնսիստորիայի այս տարուայ սեպտեմբ. 9-ի, № 2925, յայտարութիւնը, որոշեց. հաստատել նոյն կոնսիստորիայի որոշումը, որի համաձայն Ստաւրոպոլի նահ. Ս. Խաչ քաղաքի երեք քահանաները հերթով պէտք է հսկուեն Ստաւրոպոլի շրջակայքում գտնուող Թուրքմենական, Լիտնայեա Ստաւկա և Օվօշշի վայրերի հայերին:

1 Նոյեմբ., թ. 598. Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի, որոշեց. կազմել յատուկ յանձնաժողով, որին առաջադրել քննել թեմական հաստատութիւնների աշխարհական ծառայողների համար թոշակարկզ հիմնելու հարցը և եզրակացութեամբ ներկայացնել Սինոդի տնօրինութեան։

1 Նոյեմբ. թ. 601. Սինոդը որոշեց. արձակել Մ. Աթ. գանձապահի պաշտօնից Ռուբէն աբեղային և կարգել նոյն պաշտօնում Արտակ վարդապետին։

6 Նոյեմբ., թ. 607. Սինոդը՝ համաձայն Շամախու կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ Բագու քաղաքի ծխականներին նորոգել ս. Աստուածածին եկեղեցին, ծախսելով ըստ ներկայացրած նախահաշուի 1800 ռուբլի։

13 Նոյեմբ., թ. 619. Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի, որոշեց. Երնջակի վանքի միաբան դպիր Արշակ Դաւթեանին արձակելով Մ. Աթոռի ագարակի կառավարչի պաշտօնից, նշանակել Խոր-Վիրապի վանքի ժամանակաւոր միաբան, իսկ ագարակի կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնել Մայր Աթոռի կառավարութեան անդամ Արիստակէս վարդապետին։

15 Նոյեմբ., Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի հրամանի, որոշեց. Մ. Աթոռի յոբելենական «Շողակաթ» ժողովածուի տպագրութեան համար արտաքոյ նախահաշուի տալ Մ. Աթոռի տպարանի վարչութեան 514 ռուբլի և ս։

15 Նոյեմբ., թ. 622. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ Երևան քաղաքի բնակիչ Պարոյր Աթանասեանը իւր ժամանակին չի ներկայացել սարկաւագ ձեռնադրուելու և գտնւում է անյայտ բացակայութեան մէջ, որոշեց. բեկանել Սինոդի անցած 1912 թ. № 732, օրադրական վճիռը, որով թոյլ էր տուած ընդունել նրան հոգևոր կոչման մէջ։

15 Նոյեմբ., թ. 629. Սինոդը՝ ի նկատի ունենալով, որ Աղէքսանդրոպոլի գաւառի Ալիխան գիւղն ունի քհնյ. որոշեց. մերժել Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը

թումարտաշ գիւղացի Վարոս Տէր-Յովհաննիսեանին նոյն գիւղի վերայ քհնյ. ձեռնադրելու վերաբերմամբ և պատուիրել կոնսիստորիային խիստ միջոցներով հալկադրել Եղիշէ քհնյ. Տէր-Սաւագեանին մշտապէս բնակուել յիշեալ գիւղում և հովուել իւր հօտը։

20 Նոյեմբ., թ. 636 Սինոդը՝ Վրաստանի թեմի առաջնորդի միջնորդութեան համաձայն, որոշեց. Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ Վրաստանի թեմի թէլէթ և Բոլնիս ուխտատեղիների արդիւնքի միայն մի մասը իսկ միւս ուխտատեղիների ամբողջ արդիւնքը ժամանակաւորապէս դնել թեմի առաջնորդի տրամադրութեան տակ՝ թեմական տեսչին ռոճիկ հայթհայթելու համար։

20 Նոյեմբ., թ. 639. Սինոդը՝ քննութեան առնելով Ներսիսեան Հոգ. Դպրանոցի 1913/14 ուս. տ. նախահաշիւը, որոշեց. հաստատել ներկայացրած նախահաշիւը և ուղարկելով Դպրանոցի Հոգաբարձութեան ի գործադրութիւն, պատուիրել նրան դպրոցի տարեկան եկամտից առնուազն 5% յետ դնել լրացնելու այն յատուկ և անձեռնմխելի գումարը, որ ծախսուել է վերջին տասնամեակում մի շարք աննպաստ հանգամանքների պատճառով։

25 Նոյեմբ., թ. 641. Սինոդը՝ Վրաստանի թեմի առաջնորդի միջնորդութեան համաձայն, որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն արձակել Խոր-Վիրապի վանքի միաբանութիւնից Գեղամ վարդապետ Բաբաջանեանին և թոյլ տալ Վրաստանի թեմի առաջնորդին կարգել նրան Լոռու վիճակի «Յովհան Օձնեցու» ուխտատեղու վերահսկող։

25 Նոյեմբ., թ. 644. Սինոդը՝ լսելով Վրաստանի թեմի առաջնորդի այս տարուայ նոյեմբ. 21-ի յայտարարութիւնը՝ «Մարց» կալուածում կառավարչի օգնական Բաղալ Խարատեանի չարագործների ձեռքով սպանուելու մասին, որոշեց. պատուիրել Վրաստանի թեմի առաջնորդին տալ սպանուած անտառապահի ընտանիքին կալուածի եկամուտներից միանուագ նպաստ հարիւր ռուբլի։